ԱՇՈՑՔ

Հեռ: 077 18 08 66

Մակերես՝ 32.98կմ^2

Բնակչություն՝ 2725

Ինդեքս՝ 2801

ashotsq.shirak@mta.gov.am

Գյուղը հիմնադրվել է 1829թ.-1830թ., Աշոցք գետի աջափին, Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ և դրան հարակից գավառներից գաղթվածների կողմից, լքված ու ամայի հին բնակավայրի տեղում: Գյուղը զբաղեցնում է 220 հա տարածք: Գյուղում պահպանվել է XIX դարի եկեղեցի, հին գերեզմանոց: Այն սկզբում կոչվել է Ղզլղոչ, հետագայում Ղուկասյան, իսկ այժմ՝ Աշոցք: Բնակավայրը ծովի մակերևույթից բարձր է 2006-2039 մետր: Աշոցքում գործում են հիվանդանոց, պոլիկլինիկա, մշակույթիտուն, գրադարան, միջնակարգ դպրոց, արվեստի դպրոց, մանկապարտեզ, պետական, տարածքային կառավարման մարմինների ստորաբաժանումներ, բանկի մասնաճյուղ, փոստ, ավտոմատ հեռախոսակայան, բջջային կապի սպասարկման գրասենյակներ, էլ. ցանց,

այլ հիմնարկներ ու կազմակերպություններ: Աշոցքը տարածաշրջանի ամենամեծ բնակավայրն է, 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուներ 2827 բնակիչ: